Դանիել Վարուժան

Կալերու գիշեր

Ամարվան քա՛ղցր գիշեր, գլուխը կամին վրա դրած՝
Աշխատանքի սուրբ Ոգին Կալերուն մեջ կը նընջե:
Կը լողա մեծ Լռությունն աստղերուն մեջ ծովացած:
Անհունը՝ բյուր աչքերու թարթափով՝ գի՛ս կը կանչե:

Կ'երգեն, հեռուն, ծրղրիդներ: Ջուրերուն մեջ լրճակին
Կ'ըլլա հարսնիք մը ծածուկ նայադներու՝ այս գիշեր:
Սյուքն հուզելով ուռենին ափերուն վրա գետակին՝
Կ'արթընցընե անծանոթ լարերու վրա նրվագներ:

Ծոթրիններու բույրին մեջ, պառկած կատարը դեզին՝
Ես կը թողում որ սրրտիս դրպչի ամեն մեկ ճաճանչ.
Ու կ'արբենամ գինիովն Անհունի մեծ կարասին՝
Ուր կը ճրմլվին ասուպներ քայլի մը տակ անճանաչ:

Հե՞շտ է մրտքիս ընկրղմիլ կապույտին մեջ լուսալիք,
Նավաբեկիլ – թե հարկ է – կրրակներուն մեջ վերին.
Գրտնել աստղեր նորանոր, կորսրված հի՞ն հայրենիք՝
Ուրկե ինկած հոգիս դեռ կու լա կարոտն եթերին:

Վերանալ քա՛ղցր է ինծի թևերուն վրա լրռության,
Լրսել միա՛յն Միջոցին շընչառությունն անխրռով,
Մինչև աչքերրս գոցվին քունի մը մեջ դյութական,

Ու կոպերուս տակ մընա Անհունը իր աստղերով:

Ա՛յսպես, ա՛յսպես կը նընջեն գյուղին մարդիկը ամեն.
Հոտաղն է իր սայլին վրա, վերմակին տակ լուսածոր,
Հարսն է դեզի կատարին՝ ծոցը բացված զեփյուռեն՝
Ուր կը պարպե Հարդգողն իր կաթը սափոր առ սափոր:

Եվ այսպես՝ օր մը պառկած՝ փողփողումին տակ երկնի,
Իմ ծընողներըս մըշակ՝ զիս հըղացան կաթոգին,
Զիս հըղացա՜ն սևեռած իրենց աչքերը բարի
Վերն ամենեն մեծ Աստղին, ամենավառ Հըրայրքին: